Վերագործարկված է GPS հենակետային կայանը

Ի՞նչ անել սննդային թունավորման դեպքում



Հրաժարվում եմ ծխելուց



ԱՄՆ-ում ուսումնասիրում են ուղեղի աշխատանքը

ԱԻՆ
ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
MINISTRY OF EMERGENCY SITUATIONS OF RA

ISSN 1829-149X

արտակարգ թերթ

ով իրազեկված է, նա զգաստացված է

N 13 (477) 19.4.2013 -25.4.2013 www.emergency.am

Հրդեհային անվտանգության համակարգ՝ դպրոցում

Ապրիլի 17-ին ՀՀ ԱԻՆ նախարարությունը Երեւանի Ս. Գեւորգյանի անվան թիվ 189 ավագ դպրոցում անցկացրեց ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություն՝ «Դպրոցում ծագած ուժեղ հրդեհի դեպքում աշակերտների տարհանման, հրդեհաշիջման եւ փրկարարական աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը» թեմայով:

Միջոցառմանը մասնակցում էին դպրոցի ուսուցչական եւ աշակերտական կազմը, ՀՀ ԱԻՆ հատուկ նշանակության փրկարարական աշխատանքների իրականացման կենտրոնից եւ հատուկ հրշեջ ջոկատից 1-ական մարտական հաշվարկ, շտապօգնության 1 բրիգադ եւ ՀՀ ոստիկանության հասարակական կարգի պահպանման ծառայության մեկ մարտական հաշվարկ:

Ուսումնավարժության նպատակներն էին.

- գործնականում ստուգել դպրոցում տեղադրված «ՍՈՍ ՍԻՍԹԵՄՍ» հակահրդեհային ահազանգման ու ազդարարման համակարգի, ինչպես նաեւ ՔՊ պլաններով նախատեսված տնօրինության եւ ուսուցչական կազմի կողմից տարհանման գործընթացների իրականացման հմտությունները.
- կատարելագործել հատուկ նշանակության փրկարարական աշխատանքների իրականացման կենտրոնի եւ հատուկ հրշեջ ջոկատի անձնակազմերի գործնական հմտությունները.
- ներդաշնակ դարձնել արձագանքող ուժերի գործողությունները:

Մտահղացման համաձայն՝ դպրոցի կենտրոնական, երկհարկանի մասնաշենքի 2-րդ հարկի հանդիսությունների դահլիճում հրդեհ էր բռնկվել, որը գրավել էր շուրջ 100 քմ տարածք ու տարածվում էր դեպի տանիք: Կար 4 պայմանական տուժած, որոնք ստացել էին տարբեր աստիճանի այրվածքներ եւ այլ վնասվածքներ: Առկա էր հրդեհի տարածման ու ծխապատ գոտու առաջացման վտանգ, եւ անհրաժեշտ էր տարհանել տվյալ շենքում գտնվող ուսուցչական կազմին եւ 1000-ից ավելի աշակերտներին:

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության հետ համատեղ «ՍՈՍ ՍԻՍԹԵՄՍ» ընկերությունը 2012 թ. ստեղծել եւ ներդրել է Հայաստանում նախադեպը չունեցող հակահրդեհային շուրջօրյա մոնիթորինգային համակարգ:

Մոնիթորինգի խնդիրն է ծխի տարածման մասին ահազանգն ինքնաշխատ ռեժիմում հնարավորինս կարճ ժամանակահատվածում հասցնել ՀՀ ԱԻՆ ՃԿԿ «911» արագ արձագանքման ծառայության վերահսկման վահանակ: Այս համակարգի կիրառմամբ հնարավոր է խուսափել մարդկային զոհերից, ավերածություններից, նվազագույնի հասցնել հրդեհի պատճառած վնասը, ապահովել աշխատակիցների եւ կառույցի անվտանգությունը:

Հանրապետությունում «ՍՈՍ ՍԻՍԹԵՄՍ» համակարգն առաջինը տեղադրվել է Ս. Գեւորգյանի անվան դպրոցում եւ գործնականում կիրառվում է առաջին անգամ: Հակահրդեհային շուրջօրյա մոնիթորինգային համակարգն ապահովում է հակահրդեհային վերահսկում առցանց ռեժիմում, օրը 24 ժամ՝ «911» ծառայության միջոցով եւ հրդեհի դեպքում ապահովում է ինքնաշխատ կանչ՝ առանց անձնակազմի միջամտության:

Որոշված ժամին կառավարման վահանակից տրվեց տագնապի ազդանշան, որն ավտոմատ փոխանցվում է ՃԿԿ: Շենքում բարձրախոսների միջոցով հրահանգ եղավ կազմակերպել դպրոցի ուսուցչական կազմի եւ աշակերտների անհապաղ տարհանում: Դեպքի վայր ժամանած արձագանքման ուժերն սկսեցին տարածքի հետախուզություն, հայտնաբերեցին եւ վտանգավոր գոտուց դուրս բերեցին «տուժածներին»՝ միաժամանակ սկսելով հրդեհաշիջում:

ՓՕ տնօրեն, գեներալ-մայոր Ս. Ազարյանը՝ ամփոփելով ուսումնավարժության արդյունքները, ասաց.

- Սա պլանային ուսումնավարժանք էր, որն անցավ ըստ մտահղացման եւ ծառայեց իր նպատակին: Երեք ամիս առաջ ԱԻ նախարար Ա. Երիցյանը հրաման էր տվել, որ բոլոր կարեւոր արտադրական եւ հասուկ նշանակության օբյեկտները «ՍՈՍ ՍԻՍԹԵՄՍ» համակարգի միջոցով միացված լինեն «911» ծառայությանը: Սա առաջին դպրոցն է, որտեղ փորձնական տարբերակով տեղադրվել է «ՍՈՍ ՍԻՍԹԵՄՍ» համակարգը: Ուսումնավարժանքի արդյունքները կվերլուծվեն, թերությունները կշտկվեն եւ համակարգը կաստարելագործված տարբերակով կտեղադրվի բոլոր դպրոցներում: Մեր խնդիրն է նվազագույնի հասցնել մարդկային գործոնը եւ րոպեների ընթացում, հնարավորինս արագ արձագանքել հրդեհին: Նաեւ նախատեսում ենք նման ավտոմատացված համակարգ տեղադրել հանրապետության վերելակներում, որպեսզի որեւէ արտակարգ պատահարի դեպքում հնարավոր լինի մեկ կոճակի հպումով կապ հաստատել «911» ծառայության հետ: Արդյունքում՝ կտրամադրվեն հոգեբանական օգնություն եւ խորհուրդներ՝ մինչ փրկարարների ժամանումը: Երկու օր առաջ ստացել ենք համապատասխան տեխնիկան եւ մոտ օրերս այն կփորձարկվի:

Թիվ 189 ավագ դպրոցի տնօրեն Սերգեյ Պետրոսյանը, շնորհակալություն հայտնելով ԱԻ նախարարությանը, նշեց.

- Կարող եմ վստահ ասել, որ միջոցառումը լիովին ծառայեց իր նպատակին: Երեխաները եւ ուսուցչական կազմը հստակ իմացան իրենց անելիքները վտանգավոր իրավիճակում: Այս համակարգի ամենակարեւոր առավելությունն այն է, որ համակարգն ավտոմատացված է եւ մարդկային գործոնը հասցված է նվազագույնի: Մենք արդեն պայմանավորվածություն ունենք, որ նման միջոցառումները պետք է շատ ավելի հաճախ անցկացվեն:

«ՍՈՍ ՍԻՍԹԵՄՍ» ընկերության գլխավոր տնօրեն Վահագն Ծատուրյանի խոսքերով, նման համակարգեր առաջին անգամ են Հայաստանում ներդրվել.

- Դա արվել է ԱԻ նախարարության պահանջով: Ամբողջ աշխարհում ընդունված է ազդարարման համակարգերի առկայությունը հասարակական վայրերում: Այսօր մենք էլ ենք գնում այդ ճանապարհով:

Ներկայումս Հայաստանում այս համակարգը տեղադրված է ավելի քան 155 օբյեկտում՝ պետական կառավարման հիմնարկներ, գործարաններ, պահեստներ, խանութներ, հյուրանոցներ եւ այլն:

ԱԻՆ

միացյալ հեռախոսահամարն է

911

Փլուզվել է պարիսպը

Ապրիլի 11-ին, ժամը 17.41-ին տեղեկություն է ստացվել, որ Շիրակի մարզի Գյումրիի Թումանյան 19 հասցեում գտնվող զինվորական կոմիսարիատի պարիսպը փլուզվել է:

Դեպքի վայր է մեկնել Շիրակի մարզային փրկարար վարչության ՃԿԿ օպերատիվ խումբը:

Տեղում պարզվել է, որ փլուզվել է պարսպի մոտ 5 քմ մակերեսով հատվածը:

Փրկարարները վտանգավոր հատվածը սահմանազատել են ժապավենով:

Տուժածներ չկան:

Ընկել է գնացքի տակ

Ապրիլի 12-ին, ժամը 04:06-ին տեղեկություն է ստացվել, որ «Նաիրիտ» գործարանի մոտ տեղի է ունեցել ՃՏՊ, քաղաքացին ընկել է գնացքի տակ. անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ:

Պարզվել է, որ «Հարավկովկասյան երկաթուղիներ» ՓԲԸ Նորագավիթ-Երեւան ուղեմասի 3-րդ կմ-ում՝ հետիոտնի համար չնախատեսված հատվածով անցնելիս, ընթացող գնացքը հարվածել է Նորագավթի բնակչուհի՝ 1932 թ. ծնված Ծ. Խաչատրյանին:

Փրկարարները, ոտքով անցնելով մոտ 300 մ, Ծ. Խաչատրյանին պատգարակով մոտեցրել են շտապօգնության ավտոմեքենային: Տուժածը տեղափոխվել է «Էրեբունի» բժշկական կենտրոն:

Ըստ բժիշկների՝ տուժածի առողջական վիճակը բավարար է:

Հրդեհ՝ ՃՏՊ-ի հետեւանքով

Ապրիլի 13-ին, ժամը 19.14-ին տեղեկություն է ստացվել, որ Սիսիան-Սառնակունք ավտոճանապարհի 2-րդ կմ-ում տեղի է ունեցել ՃՏՊ՝ հրդեհի բռնկումով:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ:

Դեռեւս չբացահայտված հանգամանքներում Սիսիան-Սառնակունք ավտոճանապարհի 20-րդ կմ-ում բախվել են «Մերսեդես» մակնիշի 33 LS 874 պ/հ եւ «Օպել» մակնիշի 29 LU 504 պ/հ ավտոմեքենաները: Պատահարի հետեւանքով «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենան բռնկվել է:

Հրդեհը մեկուսացվել է ժամը 19.48-ին, մարվել՝ 20.08-ին:

Ամբողջությամբ այրվել է «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենան:

Մինչ հրշեջ-փրկարարների ժամանումը՝ «Օպել» մակնիշի ավտոմեքենայի վարորդ՝ 1959 թ. ծնված Սեյրան Վարդանյանը, ուղեւոր՝ 1978 թ. ծնված Լուսինե Վարդանյանը, «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենայի վարորդ՝ 1967 թ. ծնված Ռոբերտ Սարգսյանը, ուղեւորներ՝ 1968 թ. ծնված Բաբկեն Աղաջանյանը, 1988 թ. ծնված Իրինա Պետրոսյանը, 1988 թ. ծնված Արման Համբարձումյանը եւ 1988 թ. ծնված Կարեն Պետրոսյանը տեղափոխվել են Սիսիանի բժշկական կենտրոն, այնուհետեւ՝ Ա. Համբարձումյանը, Ռ. Սարգսյանը եւ Կ. Պետրոսյանը տեղափոխվել են զինվորական հոսպիտալ:

Ըստ բժիշկների՝ տուժածների առողջական վիճակը բավարար է:

Հրդեհ՝ պղնձամոլիբդենային կոմբինատի տարածքում

Ապրիլի 13-ին, ժամը 21.41-ին տեղեկություն է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Այունիքի Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատի տարածքում:

Դեպքի վայր է մեկնել երկու մարտական հաշվարկ: Հրդեհը մեկուսացվել է ժամը 23.04-ին, մարվել՝ 23.20-ին:

Այրվել է 100 խմ փայտակոճի մնացորդ:

Բախվել են մեքենաներ

Ապրիլի 14-ին, ժամը 21.31-ին ահազանգ է ստացվել, որ Երեւանի Նալբանդյան 130 շենքի մոտ տեղի է ունեցել ՃՏՊ, կա տուժած:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ եւ հատուկ նշանակության փրկարարական աշխատանքների իրականացման կենտրոնի հերթապահ խումբը:

Դեռեւս չպարզված հանգամանքներում բախվել են «Տոյոտա» մակնիշի 34 TO 247 պ/հ (վարորդ՝ 1988 թ. ծնված Ալեքսանդր Յակովլեւ) եւ «ԲՄՎ» մակնիշի 34 SD 304 պ/հ (վարորդ՝ 1980 թ. ծնված Մանուկ Հովհաննիսյան) ավտոմեքենաները:

Փրկարարները «ԲՄՎ» մակնիշի ավտոմեքենայից դուրս են բերել տուժած Մ. Հովհաննիսյանին:

Պատահարի հետեւանքով Ա. Յակովլեւը, Մ. Հովհաննիսյանը եւ ուղեւորներ՝ 1986 թ. ծնված Մերի Հովհաննիսյանը, 1961 թ. ծնված Ջուլիետա Հովեյանը եւ 1996 թ. ծնված Խաչիկ Միքայելյանը տարբեր մարմնական վնասվածքներով տեղափոխվել են «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն:

Ըստ բժիշկների՝ Ա. Յակովլեւի, Մ. Հովհաննիսյանի, Ջ. Հովեյանի, Խ. Միքայելյանի առողջական վիճակը միջին ծանրության է, իսկ Մանուկ Հովհաննիսյանինը՝ ծանր:

Հրշեջ-փրկարարները կատարել են ավտոճանապարհի լվացման աշխատանքներ:

Կապանում տուն է հրդեհվել

Ապրիլի 15-ին, ժամը 01.38-ին ահազանգ է ստացվել, որ Սյունիքի մարզում՝ Կապանի «Բաղաբուրջ» թաղամասում այրվում է թիվ 31 տունը:

Դեպքի վայր է մեկնել երկու մարտական հաշվարկ: Հրդեհը մեկուսացվել է ժամը 02.57-ին, մարվել՝ 05.17-ին: Այրվել են Լ. Բաղդասարյանին պատկանող երկհարկանի տան երկրորդ հարկի ննջասենյակը՝ գույքով (75 քմ մակերեսով), եւ տանիքի փայտյա կառուցատարրերը (150 քմ մակերեսով):

Հայտնաբերվել է զինամթերք

Ապրիլի 15-ին, ժամը 13.41-ին, ահազանգ է ստացվել, որ Շիրակի մարզի Փոքր Մանթաշ գյուղի դպրոցի մոտակայքում հայտնաբերվել է զինամթերք: Դեպքի վայր է մեկնել թիվ 49 ՀՓՋ-ի օպերատիվ խումբը:

Հրշեջ-փրկարարները Հ. Պալոյանին պատկանող տնամերձ հողատարածքից հայտնաբերել են «ՊԳ-42» տե-

>>>

ԱՄՆ-ի Ուեստ քաղաքում աղեղ է

ԱՄՆ-ի Տեխաս նահանգում հզոր պայթյուն է տեղի ունեցել: Պատահարը տեղի է ունեցել այն պահին, երբ հրշեջները զբաղված են եղել պարարտանյութի գործարանում փոքր հրդեհի հրդեհաշիջման աշխատանքներով:

Զոհվել է առնվազն 70 մարդ, ավելի քան 200 մարդ վիրավորվել է, այդ թվում՝ նաեւ երեխաներ: Վիրավորներից 40-ի վիճակը կրիտիկական է:

Վնասվել է մոտ 100 տուն, մի շարք շինություններ: Հնարավոր է, որ վնասված շենքերի փլատակներում մարդիկ լինեն:

Պայթյունից հետո առաջացած ծուխը հնարավոր է, որ թունավոր լինի:

Մոտակա մի քանի շրջանների բնակիչներին տարհանում են ամոնիակի արտահոսքի պատճառով. գործարանի ամոնիակի պահոցներից մեկն այրվում է:

Պայթյունի հետեւանքով շրջակա տարածքում խափանվել է էլեկտրամատակարարումը, առանց էլեկտրաէներգիայի է մնացել ավելի քան հազար բնակիչ:

Ուեստ փոքր քաղաքում, որտեղ էլ հենց գտվում է պարարտանյութերի գործարանը, ապրում է մոտ 2800 մարդ: Ուեստում շատ տներ ավերվել են, մի քանի շենքեր այրվում են, այդ թվում՝ նաեւ տեղի դպրոցը եւ ծերանոցը:

Չինաստանում թռչնի գրիպի վարակակիրների թիվն աճում է

Չինաստանում H7N9 թռչնի գրիպի զոհերի թիվն արդեն հասել է 16-ի: Վարակման 77 դեպք է գրանցվել: Մինչ անցյալ շաբաթ դեպքեր գրանցվել էին միայն երկրի արեւելյան մասերում, սակայն այս շաբաթ արդեն վիրուսակիրներ են հայտնաբերվել նաեւ երկրի մայրաքաղաք Պեկինում:

Ըստ մասնագետների՝ դեռեւս վիրուսի՝ մարդուց-մարդ փոխանցման դեպքեր չեն գրանցվել:

Չինաստանում թռչնի գրիպի տարածումը կանխարգելելու նպատակով ընտանի թռչունները ոչնչացվում են:

Բելգիայում ավտոբուսը վթարի է ենթարկվել. զոհվել է առնվազն 5 մարդ

Բելգիայի Անտվերպեն քաղաքի մոտակայքում ավտովթար է տեղի ունեցել:

Տուրիստներով լի ավտոբուսը մայրուղու վրա հարվածել է բետոնե արգելապատնեշին, դուրս եկել մայրուղուց եւ շրջվել:

Նախնական տվյալներով՝ զոհվել է առնվազն 5 մարդ, 12 մարդ տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ է ստացել: Տուժածները տեղափոխվել են Բելգիայի եւ Գերմանայի հիվանդանոցներ:

Ավտոբուսում 39 ուղեւոր է եղել, որոնցից 31-ը՝ դեռահաս:

Նախնական տվյալներով՝ ավտոբուսի վարորդը քնել է ղեկին:

Չինաստանում էկոլոգիական աղետ է

Չինաստանի Հենայն նահանգում խոզերի եւ շների զանգվածային սպանդի հետեւանքով մի քանի քիմիական գործարաններ դադարեցրել են աշխատանքը:

Միայն մեկ գյուղում սատկած խոզերի թիվը հասել է 400-ի, իսկ սատկած շների թիվը՝ 100-ի: Շանհայում վերջին շաբաթ-

ների ընթացքում Հուանպու գետում 16 հազար սատկած խոզ է հայտնաբերվել:

Պերուում ավտոբուսն անդունդն է գլորվել

Պերուի Օտուսկո նահանգում, երկրի մայրաքաղաքից 600 կմ հյուսիս-արեւմուտք, լեռնային ճանապարհի վրա ավտոբուսի վարորդը կորցրել է վերահսկողությունը, մեքենան դուրս է եկել ճանապարհից եւ գլորվել 200 մետրանոց անդունդը: Նախնական տվյալներով՝ զոհվել է առնվազն 34 մարդ: Վիրավորները տեղափոխվել են հիվանդանոց, նրանցից ոմանց վիճակը գնահատվում է ծանր: Զոհերի թիվը կարող է աճել:

արագ արձագանքման ծառայություններ

սակի նռնակ՝ առանց պայթուցիչի: Ոստիկանության աշխատակիցները նռնակը տեղափոխել են անվտանգ տարածք:

Ընկել է ջրանցքը

Ապրիլի 16-ին, ժամը 13.08-ի սահմաններում Երեւանի Նորագյուղ թաղամասում՝ «Թաիրով» կոչվող ջրանցքից դուրս են բերել Երեւանի Ֆրունզեի 6/6 շենքի 6-րդ բնակարանի բնակչուհի, 1998 թ. ծնված Գոհար Ավոյանին: Վերջինիս շտապօգնության ծառայության աշխատակիցները տեղափոխել են Երեւանի «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն:

Ըստ բժիշկների՝ տուժածի առողջական վիճակը ծանր է:

Բնակարանում նռնակ է պայթել

Ապրիլի 16-ին, ժամը 22.02-ին տեղեկություն է ստացվել, որ Շիրակի մարզում՝ Գյումրիի Մ. Ավետիսյան 27 շենքի 33-րդ բնակարանում նախնական տվյալներով պայթել է նռնակ, կա 3 տուժած (միջին տարիքի մեկ կին եւ երկու տղամարդ): Դեպքի վայր է մեկնել մարզային փրկարարական ջոկատը: Դեռեւս չբացահայտված հանգամանքներում բնակարանում պայթել է «Ֆ-1» տիպի նռնակ: Պատահարի հետեւանքով 1959 թ. ծնված Եղիշե Թորոսյանը, 1973 թ. ծնված Հովհաննես եւ 1967 թ. ծնված Հասմիկ Եղիազարյանները ստացել են տարբեր մարմնական վնասվածքներ եւ տեղափոխվել Գյումրիի բժշկական կենտրոն: Տուժածների առողջական վիճակը միջին ծանրության է:

Տեղի է ունեցել թեմատիկ խմբի հերթական հանդիպումը

Ապրիլի 11-ին «Հուսո տուն» բարեգործական կենտրոնում տեղի ունեցավ Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմ/ԱՌՆԱՊ հիմնադրամի «Հաշմանդամություն ունեցող անձանց (ՀՈՒԱ) հիմնահարցերի» թեմատիկ խմբի հերթական հանդիպումը:

Խմբի կազմում ընդգրկված են ներկայացուցիչներ ՀՀ արտակարգ իրավիճակների, աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություններից, «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալությունից եւ հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող տարբեր հասարակական կազմակերպություններից:

Հանդիպման օրակարգում ընդգրկված հիմնական հարցերն էին՝

- «ՀՈՒԱ իրավունքների պաշտպանության եւ սոցիալական ներառման մասին» օրենքի նախագծի վերաբերյալ խորհրդարանական լսումները.
- ԱԻՆ-ում հաշմանդամների աշխատանքի ընդունման գործընթացի արդի վիճակն ու առկա խնդիրները.
- ԱԻ նախարարության՝ հաշմանդամներին աշխատանքով ապահովման փորձի տարածումը:

Շրջանառվող «ՀՈՒԱ իրավունքների պաշտպանության եւ սոցիալական ներառման մասին» օրենքի նախագիծն ընդունումից հետո կարող է դառնալ հիմնական իրավական փաստաթղթերից մեկը, որով կկարգավորվեն ոլորտին վերաբերող բազում խնդիրներ: Հաշվի առնելով փաստաթղթի կարեւորությունը՝ որոշվեց առաջիկայում կազմակերպել իրավասու անձանց մասնակցությամբ քննարկում, որտեղ կներկայացվեն փոփոխությունների առաջարկներ եւ անհրաժեշտության դեպքում կկազմվի լրացումների փաթեթ:

ԱԻՆ ՓԾ տնօրենի տեղակալ, գնդապետ Ն. Գրիգորյանը նշեց, որ ԱԻ նախարարությունում արդեն իսկ աշխատանքի է ընդունվել 10 հաշմանդամ, եւս 6-ն այժմ փորձաշրջան են անցնում, եւ նախարարությունը պատրաստակամ է ավելացնելու աշխատակիցների թիվը:

Արդիական է մնում նաեւ ՀՈՒ անձանց մասնագիտական պատրաստման խնդիրը, քանի որ նախկինում ուսումը հասանելի չի եղել նրանց համար: Սրա հետ կապված՝ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի ռեկտոր Հ. Մաթեւոսյանը հայտնեց, որ աշխատանքներ են տարվում ուսումնական մասնաշենքի հնարավորությունները հարմարեցնելու հաշմանդամների կարիքներին, որից հետո այնտեղ կարող են ուսանել եւ վերապատրաստում անցնել նաեւ հաշմանդամներ:

ԱԻ նախարարությունում ՀՈՒ անձանց աշխատանքի ընդունումը դեռեւս ամիսներ առաջ թվում էր անիրագործելի, սակայն այսօր այստեղ կողք կողքի աշխատում են հաշմանդամություն ունեցող եւ ֆիզիկապես առողջ մարդիկ՝ առանց որեւէ խտրականության:

Արտակարգ իրավիճակներ ԼՂՀ-ում

Ապրիլի 11-18

Հրդեհներ

Ապրիլի 14-ին հրդեհ է բռնկվել Մարտակերտ քաղաքի Ա. Գրաշի 2 շենքում: Դեպքի վայր է մեկնել 1 մարտական հաշվարկ: Հրդեհը մարվել է: Բռնկված հրդեհի հետեւանքով ամբողջությամբ այրվել է վահանակը եւ ութ միավոր էլեկտրահաշվիչ:

ճՏՊ

Ապրիլի 15-ին տեղեկություն է ստացվել, որ Ստեփանակերտ-Վանք ճանապարհի 44-րդ կիլոմետրում տեղի է ունեցել ճանապարհատրանսպորտային պատահար: Իրար են բախվել «ԳԱԶ-24» եւ «Տոյոտա ՋԻՊ» մակնիշի ավտոմեքենաները: «Տոյոտա ՋԻՊ» մեքենան գլորվել է ձորը, կան տուժածներ: ՓԾ տարածքից դեպքի վայր են մեկնել հերթապահ ուժերը «ՈՒԱԶ» ա/մ-ով համապատասխան օգնություն ցուցաբերելու համար: Տուժածներին «Շտապօգնության» տրանսպորտային միջոցով տեղափոխել են Ստեփանակերտ քաղաքի հանրապետական հիվանդանոց: Ըստ բժիշկների՝ տուժածների վիճակները գնահատվում է բավարար:

Ապրիլի 16-ին տեղեկություն է ստացվել, որ Ասկերան-Ստեփանակերտ ճանապարհի 2-րդ կմ-ում տեղի է ունեցել ճանապարհատրանսպորտային պատահար: Ստեփանակերտ քաղաքի բնակիչ՝ 1964 թ. ծնված Ա. Աբրահամյանի «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենան գլորվել է ձորը: ՓԾ տարածքից դեպքի վայր են մեկնել հերթապահ ուժերը «ՈՒԱԶ» ա/մ-ով համապատասխան օգնություն ցուցաբերելու համար:

Զենք-զինամթերք

Ապրիլի 12-ին տեղեկություն է ստացվել, որ Ասկերանի շրջանի Սղնախ եւ Նորագյուղ համայնքի տարածքում զինամթերք է հայտնաբերվել: Դեպքի վայր մեկնած ՓԾ սակրավորները հայտնաբերված զինամթերքը (Սղնախ՝ 1 միավոր հակատանկային ավիառումբ, Նորագյուղ՝ 3 միավոր հակատանկային ավիառումբ) վնասազերծել են:

Ապրիլի 14-ին տեղեկություն է ստացվել, որ Մարտակերտի շրջանի Չլդրան համայնքի բնակիչ Դ. Ղուլյանը սեփական հողատարածքում աշխատելիս զինամթերք է հայտնաբերել: Դեպքի վայր մեկնած ՓԾ սակրավորները հայտնաբերված զինամթերքը (1 միավոր գնդիկա-բեկորային ավիառումբ) վնասազերծել են:

Ապրիլի 14-ին տեղեկություն է ստացվել, որ Մարտունու շրջանի Նորշեն համայնքի բնակիչ Գ. Կարապետյանը համայնքի տարածքում զինամթերք է հայտնաբերել: Դեպքի վայր մեկնած ՓԾ սակրավորները հայտնաբերված զինամթերքը (1 միավոր հակահետեւակային ական եւ նռնականետի արկ) վնասազերծել են:

ԼՂՀ ԿԱ փրկարար ծառայության տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժին

սեյսմիկ պաշտպանություն

Ս.թ. ապրիլի 11-ից մինչեւ 17-ը ՍՊԾ-ի դիտացանցը Հայաստանի Հանրապետության տարածքում 3 բալ եւ ավելի ուժգնությամբ երկրաշարժ չի գրանցել:

Տարածաշրջանում. 3 բալ եւ ավելի ուժգնությամբ գրանցվել է 8 երկրաշարժ: Դրանցից 2-ը (4 եւ 3 բալ ուժգնությամբ) Թուրքիայի Վանի, 2-ն էլ՝ (4 եւ 3 բալ ուժգնությամբ) Իրանի Ահարի երկրաշարժերի հետցնցումներն են:

Ապրիլի 12-ին Իրանի Խոյ քաղաքից 20 կմ հարավ-արեւմուտք գտնվող էպիկենտրոնով սեյսմիկ իրադարձության ուժգնությունն էր 3-4 բալ: Նույն էպիկենտրոնային գոտում ապրիլի 15-ին հետեւել են 4 եւ 3 բալ ուժգնությամբ ստորգետնյա ցնցումներ: Ապրիլի 16-ին Ռուսաստանի տարածքում՝ Կասպից ծովի առափնյա գոտում, տեղի է ունեցել 6-7 բալ ուժգնությամբ սեյսմիկ իրադարձություն, որի էպիկենտրոնը գտնվում է Դաղստանի մայրաքաղաք Մախաչկալայից 33 կմ հարավ-արեւելք: Երկրաշարժն զգացվել է ափամերձ բնակավայրերում, մասնավորապես Իզբերբաշե, Դերբենտ քաղաքներում եւ Սերգոկալինսկի շրջանում, զոհեր եւ ավերածություններ չկան: Երկրաշարժը ՀՀ տարածքում չի զգացվել:

Տարածաշրջանից դուրս. 6.0 եւ ավելի մագնիտուդով 4 երկրաշարժ է գրանցվել: Ապրիլի 13-ին Վանուատու կղզիների մոտ տեղի է ունեցել 6.0 մագնիտուդով երկրաշարժ: Պապուա Նոր Գվինեայի ափամերձ տարածքում ապրիլի 14-ին եւ 16-ին գրանցվել են ուժեղ սեյսմիկ իրադարձություններ, երկուսն էլ՝ 6.6 մագնիտուդով: Երկրաշարժերը ցունամի չեն առաջացրել, զոհեր եւ ավերածություններ չկան: Ապրիլի 16-ին Իրան-Պակիստան սահմանային գոտում՝ Խաշ քաղաքից 90 կմ արեւելք, տեղի է ունեցել երկրաշարժ, որն ունեցել է 7.5 մագնիտուդ: Նախնական տվյալներով Պակիստանում զոհվել է ավելին քան 30 մարդ, կան վիրավորներ, քանդվել են տասնյակ շինություններ, Իրանում զոհերի մասին տեղեկությունները դեռ ճշտվում են, վիրավորվել է մի քանի մարդ: Ստորգետնյա ցնցումներն զգացվել են Պարսից ծոցի ափամերձ պետություններում, նույնիսկ Հնդկաստանի մայրաքաղաք Նյու Դելիում: Սեյսմիկ ակտիվությունը նշված տարածքում կշարունակվի:

«ՍՊԾ» գործակալություն

եղանակի տեսություն

Առաջիկա 5 օրվա եղանակի կանխատեսում

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ապրիլի 19-ին գիշերը Լոռիում եւ Սյունիքի նախալեռներում հնարավոր է ջերմաստիճանի անկում օդում մինչեւ 0...-2 աստիճան՝ ըստ Ցելսիուսի:

Հանրապետության տարածքում՝

Ապրիլի 19-23-ին շրջանների զգալի մասում սպասվում են տեղումներ, տեղ-տեղ՝ ամպրոպ եւ կարկուտ, Լոռիում, Սյունիքի նախալեռներում եւ լեռնային շրջաններում՝ թաց ձյուն: Քամին՝ հյուսիս-արեւելյան 2-7մ/վրկ, ամպրոպի ժամանակ սպասվում է քամու ուժգնացում՝ 18-23 մ/վրկ: Օդի ջերմաստիճանն ապրիլի 21-23-ին կբարձրանա 2-4, արեւելյան շրջաններում՝ 5-7 աստիճանով:

Օդի ջերմաստիճանն ապրիլի 19-ի գիշերը կտատանվի լեռնային շրջաններում՝ 0...-5, Տավուշում՝ +1...+4, Լոռիում՝ -2...+2, Արագածոտնի նախալեռներում՝ +4...+7, Արարատյան դաշտում՝ +5...+8, Սյունիքի հովիտներում՝ +1...+5, Սյունիքի նախալեռներում՝ -1...+2 եւ Արցախում՝ +1...+4 աստիճանի սահմաններում:

Օդի ջերմաստիճանն ապրիլի 19-ի ցերեկը կտատանվի լեռնային շրջաններում՝ +6...+11, Տավուշում՝ +5...+10, Լոռիում՝ +3...+8, Արագածոտնի նախալեռներում՝ +13...+16, Արարատյան դաշտում՝ +15...+18, Սյունիքի հովիտներում՝ +7...+12, Սյունիքի նախալեռներում՝ +3...+7 եւ Արցախում՝ +5...+9 աստիճանի սահմաններում:

Երեւանում՝

Ապրիլի 19-23-ին ժամանակ առ ժամանակ սպասվում է անձրեւ եւ ամպրոպ, ամպրոպի ժամանակ քամու ուժգնացում՝ 15-20մ/վրկ:

Օդի ջերմաստիճանն ապրիլի 19-ի գիշերն սպասվում է +5...+7, ցերեկը՝ +15...+17 աստիճան տաքություն:



Վերագործարկված է GPS հենակետային կայանը

Օրերս ՀՀ ԱԻՆ սեյսմիկ պաշտպանության ծառայությունն իր Արուճ դիտակետում վերագործարկեց GPS հենակետային (ռեֆերենց) կայանը, որը նախկինում գործում էր ՍՊԾ-ի Դավիթաշեն (Երեւան) դիտակետում:

Արուճում տեղադրված GPS կայանի ընդունիչը

GPS համաշխարհային տեղակայման արբանյակային համակարգը թույլ է տալիս կատարել կոորդինատների ճշգրիտ չափումներ երկրագնդի ամբողջ տարածքում: Արուճում տեղադրված կայանը, լինելով հենակետային, ընդգրկված է IGS (International GNSS Service) ծառայության ցանկում եւ միակն է Հարավային Կովկասում: Կայանի անվանումն IGS ծառայության տիրույթում լինելու է ARCH չորստառանի կոդային հապավումի տեսքով: Ընդունիչն ու ալեհավաքը հնարավորություն ունեն կատարելու կոորդինատների ճշգրիտ չափումներ WGS-84 համակարգում՝ 30 վայրկյանը մեկ անգամ: Աշխատանքը կատարվում է ՀՀ ԱԻՆ ՍՊԾ համակարգի Արեւմտյան ծառայության մասնագետների ջանքերով՝ ամերիկյան UNAVCO (NASA-ի գործընկեր) կազմակերպության հետ համատեղ եւ նրա տեխնիկական աջակցությամբ: Մոտակա նմանատիպ կայաններ տեղակայված են Ռուսաստանի Դաշնությունում (Զելենչուկսկայա) եւ Թուրքիայում (Տրաբզոն): Վերջինս փակված է եւ գտվում է ոչ ակտիվ վիճակում:

Արուճի կայանում հավաքագրված տվյալները համացանցային կապի միջոցով կարող են հասանելի լինել աշխարհի բոլոր այն սպառողներին, որոնք օգտագործում են մշակման համապատասխան համակարգչային ծրագրեր, ինչպիսին է, օրինակ, GAMIT/GLOBK ծրագիրը, որը նախատեսված է երկրակեղեւի դեֆորմացիաների ուսումնասիրությունների համար: Գառնիի երկրաֆիզիկական դիտարանի տարածքում նախատեսվող երկու GPS կայանների տեղադրումից հետո նման կայանների ապագա «եռանկյունու» տվյալները եւս կօգտագործվեն Գառնիի ակտիվ բեկվածքի գոտում երկրակեղեւի դեֆորմացիաների հետազոտման ժամանակ:

Ամերիկյան 911-ը՝ հայկական 911-ում

Ապրիլի 12-ին ՀՀ ԱԻՆ ճգնաժամային կառավարման կենտրոն էին այցելել ԱՄՆ ոստիկանության եւ հանրային անվտանգության գործակալության («911» ծառայություն) փորձագետներ: Նրանք Հայաստանում են գտնվում աջակցելու ՀՀ ոստիկանությանը՝ ավելի արդյունավետ դարձնելու օպերատիվ կառավարման կենտրոնի աշխատանքը եւ արդիականացնելու ոստիկանության պարեկային ծառայությունը:

Սրանք կարեւոր նշանակության ունեն ոստիկանության գործունեության համար եւ լսելով ԱԻՆ ճգնաժամային կառավարման կենտրոնի մասին, ամերիկացի փորձագետները ցանկություն էին հայտնել այցելել կենտրոն՝ առավել մանրամասն ծանոթանալու դրա աշխատանքին:

Հանդիպման ընթացքում ճԿԿ պետ, գնդապետ Հ. Խանգելդյանն օտարերկրյա փորձագետներին հանգամանալից ներկայացրեց ճգնաժամային կառավարման կենտրոնի առաքելությունը, կառուցվածքը, գործունեության սկզբունքները, տեխնիկական հագեցվածությունն ու ծրագրային ապահովումը՝ նաեւ պատասխանելով հյուրերի հարցերին:

Ամերիկացի մասնագետներին հետաքրքրում էին տեղի ոստիկանության եւ շտապօգնության ծառայությունների հետ համագործակցության մեխանիզմները, ինչպես նաեւ մարդուն հրատապ օգնության «911» ծառայության զարգացման ծրագրերը:

Արտերկրի փորձագետները տպավորված էին տեսածով: Նրանք նշեցին, որ շատ լավ է, որ ճգնաժամային կառավարման կենտրոնում կուտակվող տեղեկատվության զգալի մասը հասանելի է նաեւ շարքային քաղաքացիներին, քանի որ դա կարեւոր է հանրային իրազեկման համար:

Ուսանողներն ուսումնասիրել են անվտանգության խնդիրները

2012-2013 թթ. «էկո Փիս» գիտական, էկոլոգիական կազմակերպությունը Հայաստանում իրականացնում էր «Աջակցություն արտադրական անվտանգության վերաբերյալ գիտելիքների հարստացմանը բարձրագույն ուսումնական հաստատություններում» ծրագիրը:

Այն ֆինանսավորում էր Գերմանիայի բնության, շրջակա միջավայրի պահպանության եւ միջուկային ռեակտորների անվտանգության ֆեդերատիվ նախարարությունը: Ծրագիրը համաձայնեցված է ՄԱԿ-ի արդյունաբերական վթարների կոնվենցիայի կառավարման հանձնաժողովի հետ:

Ծրագրին Հայաստանում աջակցել էին նաեւ ՀՀ արտակարգ իրավիճակների, բնապահպանության նախարարությունները, ինչպես նաեւ Հայաստանի պետական ճարտարագիտական, Երեւանի ճարտարապետության եւ շինարարության պետական համալսարանները, որոնք ընտրվել էին որպես ծրագրի մոդելային ուսումնական հաստատություններ:

Մարտի 26-ին տեղի ունեցավ ծրագրի ամփոփիչ հանդիպումը, որին մասնակցում էին ՀՀ արտակարգ իրավիճակների, բնապահպանության, առողջապահության, կրթության եւ գիտության նախարարությունների, տարբեր ԲՈՒՀ-երի, միջազգային եւ հասարակական կազմակերպությունների, արտադրական ձեռնարկությունների, ինչպես նաեւ Գերմանիայի շրջակա միջավայրի դաշնային գործակալության ներկայացուցիչներ:

Քննարկման առաջին մասը նվիրված էր իրականացված աշխատանքների արդյունքներին: Ելույթներով հանդես եկան ծրագրին մասնակից ԲՈՒՀ-երի ուսանողները՝ ներկայացնելով իրենց կատարած աշխատանքները: Մասնակիցները բարձր գնահատեցին ուսանողների կողմից Հայաստանի արդյունաբերական 5 ձեռնարկություններում իրականացված ուսումնասիրությունները եւ բարելավման միջոցառումների առաջարկները: Ի դեպ՝ ուսանողներն այդ ուսումնասիրություններն իրականացրել են նոր մեթոդաբանությամբ, որը ներկայումս կիրառվում է եվրոպական մի շարք երկրներում եւ այս ծրագրի շրջանակներում թարգմանվել էր հայերեն:

Հանդիպմանը ներկա ԱՌՆԱՊ հիմնադրամի մասնակիցները (ՀՀ ԱԻՆ, ճԿՊԱ, UNDP, UNICEF, Armenian Caritas) հանդես եկան հետագա աշխատանքներում համագործակցելու առաջարկներով:

ՄԱԿ-ի անդամ 8 երկրների (Չեխիա, Ռումինիա, Գերմանիա, Ռուսաստան, Մոլդովա, Բելառուս, Ուզբեկստան, Տաջիկստան) պատվիրակները ներկայացրեցին իրենց երկրներում արտադրական անվտանգության ոլորտում իրականացվող գործընթացները:

Ներկաները կարեւորեցին Հայաստանում ծրագրի իրականացման գաղափարը, նշելով, որ այն նաեւ կայուն նախադրյալներ է ստեղծում ծրագրի ավարտից հետո գործընթացի շարունակականությունն ապահովելու համար:

Ոլորտի զարգացումը շարունակական է լինելու

Ապրիլի 12-ին ՀՀ ԱԻ նախարարությունում կայացել է «ԱԻՆ ճգնաժամային կառավարման կենտրոնի փորձաքննություն» աղետների ռիսկի նվազեցման նախագծի ղեկավար հանձնաժողովի նիստ: Հանձնաժողովի համանախագահներն էին ՀՀ ԱԻ փոխնախարար Հ. Մխիթարյանը եւ Շվեյցարիայի զարգացման եւ համագործակցության գործակալության (ՇԶՀԳ) մարդասիրական ծրագրի ղեկավար Մաթիաս Վայնգարթը:

Հանդիպման հիմնական նպատակը նախագծի 1-ին փուլի ամփոփումն էր, եւ 2-րդ փուլի անելիքների նախանշումը:

ՓԾ տնօրենի տեղակալ, գնդապետ Ն. Գրիգորյանը համառոտ ներկայացրեց կատարված աշխատանքները:

ՇԶՀԳ փորձագետներ Բարբարա Ռոթենբերգերը եւ Պատրիկ Սմիթը շնորհակալություն հայտնեցին իրենց հայ գործընկերներին՝ արդյունավետ ու ակտիվ համագործակցության համար: Այս ընթացքում վերանայվել են ճԿԿ կառուցվածքն ու տեխնիկական զինվածությունը: Անկաշկանդ ու թափանցիկ քննարկումների շնորհիվ վեր են հանվել այն խնդիրները, որոնք խոչընդոտում են ճԿԿ առավել արդյունավետ աշխատանքին:

ճԿՊԱ ռեկտոր Հ. Մաթեւոսյանը շեշտեց, որ Հայաստանում 1-ին անգամ մշակվել են միջազգային չափանիշներին համապատասխան մոդուլներ՝ աշխատակիցների վերապատրաստման համար: Լուսակերտի ուսումնական կենտրոնում կստեղծվի նաեւ ճԿԿ սիմուլյացիոն լսարան՝ վերապատրաստման դասընթացների համար:

Նախագծի հիմնական նպատակներից մեկն ԱԻՆ կարողությունների ապակենտրոնացումն է, եւ շվեյցարացի մասնագետների գնահատմամբ՝ մեկ տարվա ընթացքում այդ ուղղությամբ եւս զգալի աշխատանք է արվել: Հաջողություններ են գրանցվել նաեւ այլ գերատեսչությունների եւ մասնավոր կազմակերպությունների հետ համագործակցության ոլորտում (ՀՀ ոստիկանություն, տրանսպորտի եւ կապի նախարարություն, բջջային օպերատորներ եւ այլն):

Նախագծի 2-րդ փուլում նախատեսվում է միջազգային փորձագետների աջակցությամբ շարունակել ԱԻՆ կարողությունների ապակենտրոնացումը, մշակել համառոտ ուղեցույցեր եւ տեղեկատվական հոսքերը կարգավորող հրահանգներ ճԿԿ անձնակազմի համար, ինչպես նաեւ վերապատրաստել ճԿՊԱ դասախոսական կազմը:

Հանձնաժողովի անդամները համաձայնեցին, որ այս ոլորտի զարգացումը չի կարող կանգնել որեւէ կետի վրա եւ պետք է շարունակական լինի:

առաջին օգնություն

Ի՞նչ անել սննդային թունավորման դեպքում

Կլլվող թույներ եւ սննդային թունավորումներ

Առօրյա կյանքում հաճախ են հանդիպում թունավորման տարբեր դեպքեր: Որոշ դեպքերում թունավորումները զարգանում են շատ արագ եւ պահանջում են անհապաղ առաջին օգնություն: Մարդու կյանքի համար անհրաժեշտ է սնունդ, սակայն, ցավոք, անորակ սննդի ընդունումը երբեմն կարող է դժբախտ պատահարի պատճառ դառնալ:

Կլման ճանապարհով անցնող թույները մարդու օրգանիզմ են թափանցում մարսողական համակարգի միջոցով: Դրանցից են օրինակ ալկոհոլը, դեղամիջոցները: Այս խմբի թույները կարող են պարունակվել նաեւ սննդամթերքում, որոշ բույսերի, պտուղների մեջ:

Սննդային թունավորումներից ամենատարածվածը մանրէային թունավորումներն են: Թունավորման պատճառ են դառնում սննդում գտնվող ախտածին մանրէների արտադրած թունավոր նյութերը: Մանրէային թունավորումներ ավելի հաճախ են հանդիպում ապխտած մսի, երշիկի, ձկնեղենի, կաթնամթերքի, ձվի, տնային պայմաններում պատրաստված պահածոների ընդունման արդյունքում:

Սննդային մանրէային թունավորման դեպքում տուժածի մոտ լինում է սրտխառնոց, փսխում, լուծ: Տուժածը բողոքում է որովայնի ցավերից, գլխացավից, գլխապտույտից: Նրա մարմնի ջերմաստիճանը կարող է բարձրանալ: Բնականաբար նա ունենում է հիվանդագին տեսք, թույլ է լինում:

Ի՞նչ անել

Կլվող թույներով թունավորման դեպքում ամենաարդյունավետ օգնությունը արհեստական փսխում առաջացնելն է: Դրա շնորհիվ տուժածի մարսողական համակարգից դեռեւս չներծծված թույները դուրս են բերվում: Արհեստական փսխում առաջացնելու համար տուժածին հարմար նստեցրեք, կողքին ունեցեք որեւէ թաս, որի մեջ նա կարող է փսխել: Տուժածին խմեցրեք 2-3լ գոլ ջուր: Ցանկալի է ջրի յուրաքանչյուր լիտրի մեջ ավելացնել 1 գդալ կերակրի սոդա: Ջուրը խմելուց հետո տուժածի մոտ առաջացրեք փսխում՝ մատով, փայտիկով կամ գդալի պոչով սեղմելով լեզվարմատը: Փսխելիս տուժածի գլուխը պետք է մի քիչ առաջ թեքված լինի: Ցանկալի է փսխման ընթացքում պահել տուժածի գլուխը՝ ձեռքով բռնելով նրա ճակատը : Երբեք մեջքի վրա պառկած վիճակում

տուժածի մոտ փսխում մի՛ առաջացրեք, քանի որ դա կարող է շնչուղիների խցանման պատճառ դառնալ: Փսխումից հետո տուժածը պետք է ողողի բերանը: Կրկնեք արհեստական փսխումը 4-5 անգամ:

Ուշադրություն

Արհեստական փսխում չի կարելի առաջացնել, եթե թույնը քայքայիչ նյութ է կամ նավթային հիմք ունի: Այս դեպքերում թույնի խտությունը նվազեցնելու համար տուժածին մեծ քանակությամբ հեղուկներ տվեք: Կարող եք տալ նաեւ մածուն: Արհեստական փսխում չի կարելի առաջացնել նաեւ այն դեպքե-րում, երբ տուժածը սրտային հիվանդ է, հղի կին է կամ անգիտակից վիճակում է:

Թունավորման դեպքում ահազանգեք շտապ օգնություն: Ցանկալի է, որ փսխուքը եւ թունավորման պատճառ դարձած նյութը, օրինակ պահածոն, փակած ամանով ուղարկեք հիվանդանոց:

Վերահսկեք տուժածի վիճակը, գրանցեք տվյալները եւ ցուցաբերեք համապատասխան ԱՕ:

Ջրազրկում

Սննդային թունավորումների դեպքում տուժածի կարող է ունենալ լուծ եւ փսխում, որոնց հետեւանքով հաճախ նկատվում են ջրազրկման երեւույթներ: Դա հատկապես վտանգավոր է երեխաների ու տարեց մարդկանց համար:

Տուժածի ջրազրկման մասին է վկայում ծարավի զգացումը, բերանի չորությունը: Ջրազրկված տուժածի անոթազարկը հաճախանում է, թուլանում է մաշկի առաձգականությունը, ձայնը նվաղում է, հնարավոր են ցնցումներ:

Այս նշաններից անգամ մեկ-երկուսի ի հայտ գալու դեպքում պետք է շտապ լրացնել հեղուկի եւ աղերի կորուստը: Դրա համար տուժածին տվեք ջրազրկման բուժման համար նախատեսված լուծույթներ, օրինակ ռեհիդրոն, օրալիտ՝ պահպանելով դրանց պատրաստման եւ օգտագործման կանոնները:

Դուք կարող եք նաեւ ինքնուրույն պատրաստել ջրազրկման ժամանակ տրվող հետեւյալ լուծույթը. 3-4 թեյի գդալ շաքարը եւ կես թեյի գդալ աղը լուծեք 1 լիտր՝ այսինքն 4-5 բաժակ ջրում: Ժամը մեկ տուժածին տվեք առնվազն 2 բաժակ այդ լուծույթից: Ցանկալի չի տուժածին կես լիտրից ավել սովորական ջուր տալ:

Թունավորումների կանխարգելում

Թունավորումները շատ ավելի հեշտ է կանխարգելել, քան օգնել թունավորված տուժածին: Շատ հաճախ երեխաների թունավորման պատճառը մեծահասակների անզգուշությունն է: Եթե դուք հետեւեք մեր առաջարկած քայլերին, ապա կնվազեցնեք թունավորման դեպքերը:

- Տնային պայմաններում պատրաստված պահածոն օգտագործելուց առաջ 10-15 րոպե եռացրեք: Հիշեք, որ պահածոն պատրաստելիս եռացնելը օգուտ չի տալիս, այն պետք է եռացնել օգտագործումից առաջ:
- Մի՛ օգտագործեք կասկածելի արտադրության սննդամթերք: Օգտագործեք գործարանային արտադրության պահածոներ:

- Բոլոր դեղամիջոցները, թունավոր նյութերը պահեք դժվար բացվող տուփերում եւ դրեք երեխաներին անհասանելի տեղում:
- Թունավոր նյութերը պահեք գործարանային սրվակներում, հակառակ դեպքում այդ նյութերի սրվակների վրա նախազգուշացնող պիտակներ կպցրեք: Բացատրեք այդ նշանների իմաստը երեխաներին:
- Երբեք մի՛ պահեք թունավոր նյութերը կերակրի համար նախատեսված տուփերի եւ տարողությունների մեջ:
- Երեխաներին դեղ տալիս երբեք այն կոնֆետ մի՛ կոչեք, այլ ճշտեք, որ սա դեղ է, ոչ թե քաղցր հյութ կամ կոնֆետ: Երեխայի ներկայությամբ դեղորայք մի՛ ընդունեք, որովհետեւ նա կարող է ձեզ նմանակել եւ խմել դեղը:
- Մի՛ օգտագործեք ժամկետանց դեղորայք կամ սննդամթերք:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը հայտարարում է Նախարարության աշխատակազմում քաղաքացիական ծառայության հետեւյալ թափուր պաշտոններն զբաղեցնելու մասին

1. Քարտուղարության գործավարության կազմակերպման եւ արխիվային գործերի վարման բաժնի առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 34-3.2-95):

Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է նախորդ տարվա մշտական եւ ժամանակավոր պահպանման ենթակա գործերի անվանացանկի կազմման, մշտական պահպանության ենթակա փաստաթղթերի ընտրության, ցուցակագրման, արխիվային ֆոնդի հաշվառման աշխատանքներին, իրականացնում է Աշխատակազմի ոչ գաղտնի փաստաթղթաշրջանառության արդյունավետ կազմակերպումը եւ Աշխատակազմում գործավարության միասնական կարգի կիրառման աշխատանքները:

Իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

• Մրցույթը կկայանա 29.05.2013 թ.՝ ժամը 16:00-ին, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության շենքում (ք. Երեւան, Դավիթաշեն 4-րդ թաղամաս, Ա. Միկոյան 109/8):

2. Փրկարար ծառայության Երեւան քաղաքի փրկարարական վարչության օպերատիվ պլանավորման եւ բնակչության պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 34-3.1-81):

Իրականացնում է իրեն ամրակցված վարչական շրջանին վերաբերող գործառույթները, ուսումնասիրում է իրեն ամրակցված վարչական շրջանի բնակչության պաշտպանության համակարգի ընդհանուր վիճակը, վերլուծում այն, դուրս է բերում հիմնական չլուծված խնդիրները եւ առաջարկություններ է ներկայացնում դրանց լուծման համար, ինչպես նաեւ մասնակցում է Արտակարգ իրավիճակներում գործելու եւ Քաղ. պաշտպանության պլանների մշակմանը եւ պարբերաբար ճշգրտում է այն:

Իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

• Մրցույթը կկայանա 11.06.2013 թ.՝ ժամը 10:00-ին, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության շենքում (ք. Երեւան, Դավիթաշեն 4-րդ թաղամաս, Ա. Միկոյան 109/8):

Նշված թափուր պաշտոններն զբաղեցնելու համար նաեւ պահանջվում է՝

• բարձրագույն կրթություն, քաղաքացիական ծառայության պաշտոններում կամ համայնքային ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ, կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական, հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների եւ ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ մինչեւ 2015 թվականի հունվարի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ.

• սույն պաշտոնների անձնագրերի 10-րդ կետի բ) ենթակետում նշված՝ իրենց լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաեւ տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում.

• համակարգչով եւ ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

• անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտությունների եւ ունակությունների, ինչպես նաեւ սույն պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթներից բխող կառավարչական հմտությունների եւ ունակությունների տիրապետում (Ցանկեր N 1-2):

Դիմող ՀՀ քաղաքացիները Նախարարություն պետք է ներկայացնեն հետեւյալ փաստաթղթերը (բնօրինակների հետ միասին)՝

• դիմում՝ մրցութային հանձնաժողովի անունով (ձեւը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),

• տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմ(ներ)ի, վկայական(ներ)ի, աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները, արական սեռի անձինք՝ նաեւ զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը, կամ համապատասխան տեղեկանք,

• մեկ լուսանկար՝ 3x4 սմ չափսի,

• անձնագրի պատճենը:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 9.30-ից մինչեւ 12.30-ը, բացի շաբաթ եւ կիրակի օրերից:

Դիմող ՀՀ քաղաքացիները մրցույթի պետք է ներկայանան ՀՀ անձնագրով:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 03.05.2013 թ.:

ՀՀ քաղաքացիները ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմում քաղաքացիական ծառայության թափուր պաշտոններն զբաղեցնելու համար կարող են դիմել նախարարության աշխատակազմ **(ք. Երեւան, Դավիթաշեն 4-րդ թաղամաս, Ա. Միկոյան 109/8, հեռ. 31-77-30)**:

Հրաժարվում եմ ծխելուց

Վատ սովորությունները, ինչպիսիք են ծխելը, խմելը, թմրանյութեր օգտագործելը միջոցներ են, առանց որի, իբր, մարդը չի կարողանում պատկերացնել իր կյանքը եւ անկախ իր կամքից դառնում է նրանց հպատակը: Մարդն սկսում է կախվածության մեջ ընկնել վատ սովորություններից եւ դրանցից ազատվել ոչ բոլորին է հաջողվում:

Այսօր մենք կանդրադառնանք առավել տարածում ունեցող վատ սովորությանը՝ ծխախոտին, որը հոգեբանորեն կախվածության մեջ է գցում մարդկանց:

Կյանքը՝ ազատ ծխախոտից

Այն գործոնների շարքում, որոնք արագացնում են ծերացման եւ օրգանիզմի հյուծման գործընթացը, ծխախոտը կանգնած է առաջին տեղում: Վիճակագրական տվյալները վստահեցնում են, որ ծխամոլները, որպես կանոն, արտաքնապես ավելի տարեց են երեւում, քան իրենց հասակակիցները, ովքեր չեն ծխում: Ծխախոտը խանգարում է, որպեսզի թթվածինը հեշտությամբ թափանցի օրգանները, այդ թվում եւ մաշկի բջջիջները, ինչն էլ մաշկին հաղորդում է մոխրագույն տեսք: Ծխախոտը նպաստում է, որպեսզի ավելի վաղ կնճիռներ հայտնվեն մարդու դեմքի վրա, քանի որ խանգարում է մաշկի վերականգնողական պրոցեսի բնականոն ընթացքին: Թոքերի քաղցքեղով հիմականում տառապում են այն մարդիկ, ովքեր չափազանց ծատ են օգտագործում ծխախոտ: Ծխող կանանց մոտ ավելի շատ հանդիպում է չբերություն եւ երբեմն էլ արգանդի քաղցքեզ: Ամենապարզ հաշվարկներով՝ ծխախոտը կրճատում է մարդու կյանքը 8 տարով: Կան շատ ուսումնասիրություններ, շատ մեթոդներ, որոնք օգնում են ծխամոլներին հրաժարվել ծխելուց: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ բանջարեղենի, մրգերի, կաթնամթերքի օգտագործումը նպաստում է հրաժարվել այդ վատ սովորությունից: Քանի որ վերը նշվածներն ազդում են համի ընկալման վրա, որն էլ փոխում է ծխախոտի համը: Այն խմիչքները, որոնք պարունակում են կոֆեին՝ սուրճը, թեյը, Cola-ն, ալկոհոլը ուժեղացնում են ծխելու ցանկությունը, ուստի այն անձը, ով ցանկանում է հրաժարվել ծխելուց, պետք է քչացնի կամ բացառի վերը նշված խմիչքները:

Ցանկացած ծխող մարդ իր կյանքում գոնե մեկ անգամ մտածել է ծխելուց հրաժարվելու մասին, սակայն իներցիայով շարունակել է ծխել:

Ի՞նչ անել

1. Հստակեցնել սահմանները

Առաջինն, ինչը պետք է անել ծխախոտից հրաժարվելու համար, դա հանգիստ եւ անկեղծ կերպով վերլուծելն է սեփական վերաբերմունքը ծխախոտի նկատմամբ: Առաջին հերթին հիշել, թե ե՞րբ, ի՞նչ պայմաններում եւ ինչի՞ համար եք սկսել ծխել: Ծխախոտը ստեղծում է ժամանակավոր մի խաբկանք, եւ ձեզ թվում է, թե դուք տվյալ պահին ունեք այն, ինչի կարիքն զգում եք: Ծխախոտից կախված մարդն այդ զգացողությունը փնտրում է ամեն գլանակի մեջ: Ո՞ր պահերին եք ավելի հաճախ ծխում, ի՞նչ է այն ձեզ տալիս, պետք է պարզեք, թե ծխախոտի ծխի տակ իրականում ի՞նչ հոգեվիճակ է թաքնված: Մարդիկ ծխում են տարբեր պատճառներով, սակայն կան վախի որոշ տեսակներ, որոնք տիպիկ են բոլորին: Ոմանք վախենում են չաղանալ, իսկ ծխախոտը փակում է մարդու ախորժակը եւ ուտելու մասին խոսք լինել անգամ չի կարող: Եւ ծխախոտի կողմից տրվող ժամանակավոր որոշակի էներգիան ստեղծում է խաբկանք, թե մարդն իրեն լավ է զգում առանց հաց ուտելու: Այստեղ պետք է վերանայեք առաջին հերթին ձեր վերաբերմունքը սննդի նկատմամբ, սննդակարգի եւ ֆիզիկական ակտիվության նկատմամբ: Հիշե՛ք. ոչ մի քիմիական միջոց չի կարող փոխարինել այն էներգիային եւ ակտիվությանը, որը ձեզ հաղորդում է սնունդը:

Հաջորդ հարցը, որ ձեզ կանհանգստացնի, դա այն է, որ ծխելը ձեզ համար դարձել է կյանքի անբաժանելի մաս, որ ծխելու պրոցեսն իրականացնում եք ինչպես



շնչելը, ջուր խմելը, այսինքն՝ չեք կարողանում պատկերացնել ձեր կյանքն առանց դրա: Ոմանք չեն էլ պատկերացնում, թե ինչ կարող են անել իրենց մարմնի հետ, քանի որ իրենց անպաշտպան են զգում առանց ծխախոտի: Եթե ծխախոտը պաշտպանական ֆունկցիա է կատարում, ապա կարելի է գտնել նրան հավասար, նրան փոխարինող մի տարբերակ, որը ձեզ կհաղորդի վստահություն: Բացի այդ, պետք է աստիճանաբար սովորել ավելի խոր եւ ազատ շնչել: Ծխախոտն իր տակ կարող է թաքցնել նաեւ ձանձրույթից, հոգեկան դատարկությունից, դեպրեսիայից ազատվելու շատ հարմար եւ հեշտ տարբերակ: Այստեղ դուք պետք է վերլուծեք, թե ի՞նչ է պակասում ձեր կյանքում, կյանքը լցնեք այն գույներով, որոնք առավել հետաքրքիր կդարձնեն առօրյան: Գտեք ձեզ համար հետաքրքրության նոր ոլորտներ, ընդլայնեք ձեր շփման սահմանները: Ձեր կյանքի մեջ մտցրեք որոշակի ակտիվություն, շարժում, որը նշանակություն եւ իմաստ կունենա ձեզ համար:

2. Նախապատրաստական շրջան

Ավելի արդյունավետ կլինի, եթե դուք ճիշտ գնահատեք ձեր կամքի ուժը: Փորձեք ծխախոտի գլանակը վառել մեկ ժամ ավելի ուշ, քան սովոր եք: Փորձեք այն մինչեւ վերջ չծխել, հանգցրեք ծխախոտի կեսից: Պատկերացրեք, թե դուք մի մարդ եք, որը կարիք չունի ծխելու եւ նշեք այն պահերը, թե երբ է ծխելը ձեզ համար տհաճ: Այստեղ ամենակաեւոր պահն այն է, որ ծխախոտից հրաժարվող մարդն իսկապես ցանկանա դա անել, այլ ոչ թե ցույց տա, որ ուզում է, սակայն իրականում չի էլ ուզում: Իսկ երբ մարդն իսկապես ինչ-որ բան է ի սրտե ուզում, ապա համոզված եղեք՝ արդյունքը միշտ գերազանցում է սպասելիքները: Կարեւոր է նաեւ, որ որոշումը շատ հստակ եւ հասունացած լինի այդ քայլին գնալու համար: Եթե մարդը պատրաստ չէ այդ քայլին, ոչ մի արդյունք էլ չի լինի: Ձեզ մոտ պետք է հասունացնեք ծխախոտից հրաժարվելու դրդապատճառը, պետք է հստակ գիտակցեք՝ ինչո՞ւ:

3. Փնտրեք տեղեկատվություն եւ օգնություն

Եթե մարդը տեղեկացված է լինում, թե ինչ զգացողություններ կարող է ունենալ ծխախոտից հրաժարվելուց հետո, ապա նա իրեն ավելի պաշտպանված կարող է զգալ: Քանի որ օրգանիզմը սովոր է օրական որոշակի չափաբաժին ստանալ, ապա այդ քիմիական աղբից ազատվելու համար պետք է օրգանիզմին պատրաստել, տեղեկացված լինել եւ պատրաստվել նաեւ հոգեբանորեն: Թղթի վրա գրեք ծխախոտի բացասական կողմերի մասին եւ նրանից հրաժարվելու դրական կողմերի մասին: Բացասական կողմերը թվարկելու համար շատ ժամանակ է հարկավոր, մենք կնշենք մի քանիսը՝ հոգնածություն, հազ, գրգռվածություն, աղեստամոքսային տրակտի խանգարումներ, քնի խանգարումներ եւ այլն: Այսքան բացասական կողմերը գիտակցելուց հետո, ցանկացած հասուն եւ գիտակից մարդ իրեն կտրամադիր ազատվել այդ վատ սովորությունից: Առաջին դրդապատճառը, որը կօգնի ձեզ քայլեր անելու, դա առողջ լինելն է, այնուհետեւ սիրելի մարդկանց այդ վտանգավոր նյութով՝ նիկոտինով չթունավորելը: Մի՛ զրկեք ձեզ կյանքը լիարժեք զգալու եւ վայելելու հնարավորությունից: Ծխախոտը կյանքի վայելքների մեջ չի մտնում, այն մի մոլախոտ է, որը ձեզ ավելի թուլացնում եւ իր ծառան է դարձնում, իսկ դուք ավելի ուժեղ եք՝ ձեր կյանքն անկախորեն կերտելու եւ ոչնչից ու ոչ մեկից կախված չլինելու համար: Առողջ եղեք:

Աննա Կարապետյան
հոգեբան-խորհրդատու

Բնակչության տարբեր սոցիալական խմբերի կենսագործունեության անվտանգության մշակույթի տարածման, ՀՀ ԱԻՆ համակարգում պրոֆեսիոնալիզմի բարձրացման, առաջավոր փորձի ցուցադրման, լավագույն մասնագետների, ինչպես նաեւ փրկարար ծառայության լավագույն տարածքային ստորաբաժանումների ի հայտ բերման նպատակով ՀՀ ԱԻ նախարարությունն անցկացնում է մարդկանց անվտանգության եւ փրկության «Արիության համաստեղություն» խորագրով հանրապետական փառատոն: Փառատոնի կարգախոսն է՝ «Մեր ընտրությունը կյանքն է առանց վտանգի»:

Փառատոնի նպատակներն են՝

1) բնակչության տարբեր սոցիալական խմբերի կենսագործունեության անվտանգության մշակույթի տարածումը.

2) ԱԻ եւ դրանց հետեւանքների վերացման ընթացքում ՀՀ ԱԻՆ աշխատակիցների, բնակիչների հերոսության եւ արիության օրինակների, ինչպես նաեւ փրկարարների ու հրշեջ-փրկարարների դժվար աշխատանքի մասին տեղեկատվությունը հասարակության լայն շրջաններին հասցնելը.

3) աճող սերնդի՝ ժամանակակից հերոսների օրինակով հայրենասիրության եւ խիզախության ոգով դաստիարակությունը.

4) ԱԻ կանխարգելման, բնակչության իրազեկվածության եւ պատրաստվածության գործում զանգվածային լրատվամիջոցների դերի բարձրացումը.

5) ԱԻ ոլորտի տարբեր մասնագետների գործունեության մասին պատմող ՁԼՄ-ների, լավագույն լրագրողական, լուսանկարչական աշխատանքների հեղինակների ի հայտ բերումը եւ խրախուսումը.

6) ՀՀ ԱԻՆ համակարգում պրոֆեսիոնալիզմի բարձրացումը, առաջավոր փորձի ցուցադրումը, լավագույն մասնագետների, ինչպես նաեւ ՀՀ ԱԻՆ ՓԾ լավագույն տարածքային ստորաբաժանումների ի հայտ բերումը:

Լրագրողական աշխատանքների մրցանակաբաշխության անվանակարգերն են.

1) հեռուստատեսության համար՝

ա. հեռուստատեսային տեղեկատվական լավագույն ծրագիր.

բ. հեռուստատեսային վերլուծական լավագույն ծրագիր.

գ. լավագույն վավերագրական ֆիլմ կամ ռեպորտաժ.

2) ռադիոյի համար՝

ա. լավագույն տեղեկատվական հաղորդում ռադիոյով.

բ. լավագույն վերլուծական հաղորդում ռադիոյով.

3) տպագիր մամուլի համար՝

ա. լավագույն տպագիր ռեպորտաժ.

բ. լավագույն տպագիր հոդված.

գ. լավագույն տպագիր հարցազրույց.

4) լրատվական գործակալությունների համար՝

ա. լրատվական գործակալությունների ամենակատիվ լրագրող.

5) ինտերնետ նախագծերի համար՝

ա. լավագույն ինտերնետ նախագիծ.

6) հատուկ անվանակարգեր՝

ա. նյութի լավագույն հերոս (շնորհվում է նյութերի հերոսներին).

բ. լավագույն նյութ՝ հերոս երեխաների մասին.

գ. լավագույն լուսանկարի հերոս:

Լուսանկարչական աշխատանքների անվանակարգերն են.

1) Ոչ ոք չի մնա վտանգի մեջ (արտակարգ իրավիճակների պայմաններում ՀՀ ԱԻՆ, այլ ծառայությունների ծառայողների եւ քաղաքացիների անհապաղ գործողություններ, հրդեհ, ջրհեղեղ, երկրաշարժ, արտադրական կամ կենցաղային վթար, կամ վնասվածք եւ այլն, ԱԻ պայմաններում փրկարարների եւ հրշեջ-փրկարարների ուսումնավարժանք-նախապատրաստում, անձնազոհության, արհեստավարժության, խիզախության, շրջապատի նկատմամբ ուշադրության, օգնության հասնելու պատրաստակամության վերաբերյալ լուսանկարչական տարեգրություն).

2) Օգնությունը գալիս է ժամանակին (պատահարների հետեւանքների վերացման աշխատանքներ, մարդկանց, կենդանիների, շրջակա միջավայրի նկատմամբ ուշադրության լուսանկար-վկայություն, հոգատարության եւ ուշադրության դրսեւորում՝ ցանկացած պայմաններում).

3) Դեմքով դեպի հերոսը (աշխատանքում եւ կյանքում խիզախություն ցուցաբերած փրկարարների, հրշեջ-փրկարարների, այլ մասնագիտությունների ներկայացուցիչների կյանքի եւ աշխատանքի ժամանակագրություն: Լուսանկար-մարդկային դեմք եւ աշխատանքային առօրյա, «ճշմարտության պահ», բարդ իրավիճակից ելքի որոնում եւ պարզ կենսական ուրախություններ):

Լրագրողական անվանակարգերի համար նյութերը պետք է ներկայացվեն.

1) հեռուստաընկերությունները՝ տեսագրված DVD սկավառակի վրա.

2) ռադիոընկերությունները՝ ձայնագրված CD սկավառակի վրա.

3) թերթերը եւ ամսագրերը՝ 3-ական տպագիր համարով, հրատարակչության կողմից հաստատված կնիքով, ինչպես նաեւ էլեկտրոնային տարբերակով (CD սկավառակով).

4) համացանցային նախագծերը՝ էլեկտրոնային տարբերակով (CD սկավառակով):

Լուսանկարչական աշխատանքների անվանակարգերին կարող են մասնակցել պրոֆեսիոնալ եւ սիրողական լուսանկարների եւ լուսանկարների շարքի հեղինակներ: Յուրաքանչյուր լուսանկարիչ մրցույթին կարող է ներկայացնել մինչեւ 10 լուսանկար:

Մրցանակաբաշխությանը ներկայացվող յուրաքանչյուր դիմումին կցվում է մրցութային անվանակարգի անվանումը, նյութի անունը, թողարկման ամսաթիվը եւ հեղինակի վերաբերյալ տեղեկություններ (անուն-ազգանուն, աշխատանքի վայր, զբաղմունքի տեսակը, հասցեն, հեռախոսը եւ էլեկտրոնային հասցեն):

Կազմակերպիչներն իրավունք ունեն ոչ կոմերցիոն նպատակներով օգտագործելու ներկայացված նյութերը՝ պահպանելով հեղինակային իրավունքը:

Մրցույթին ընդունվում են գունավոր եւ սեւ-սպիտակ լուսանկարներ՝ DVD/CD կրիչներով: Լուսանկարներին կցվում է.

1) Հարցաթերթ, որում նշվում է հեղինակի անուն-ազգանունը, աշխատանքի վայրը, պաշտոնը, հեռախոսի համարը:

2) Լուսանկարի մասին համառոտ պատմություն (1 էջ):

Այն աշխատանքները, որոնք պարունակում են բռնության տարրեր, ռասայական, ազգային եւ կրոնական անհանդուրժողականություն, ինչպես նաեւ մերկ մարմիններ, մրցույթին չեն ընդունվում:

Մրցանակաբաշխության հաղթողների աշխատանքները կտեղադրվեն ՀՀ ԱԻՆ կայքում:

Մրցույթին կարող են ներկայացվել 2012-2013 թթ. ընթացքում պատրաստված նյութերը: Աշխատանքներն ընդունվում են մինչեւ ս/թ օգոստոսի 1-ը՝ սովորական (ՀՀ ԱԻՆ տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչություն, ք. Երեւան, 0054, Դավիթաշեն 4, Ա. Միկոյան 109/8) եւ էլեկտրոնային փոստով՝ info@mes.am:

Արտակարգ մրցույթ. «Արիության համաստեղություն»

ԱՄՆ-ում սկսում են ուսումնասիրել մարդու ուղեղի աշխատանքը

Նյարդաբանական հիվանդությունների ուսումնասիրությանն ուղղված նախագիծը կֆինանսավորվի 100 միլիոն դոլարով: Դրա մասին Սպիտակ տանը հայտարարեց ԱՄՆ-ի նախագահ Բարաք Օբաման:

Նա ասաց, որ նախկինում «Մարդու գենոմ» եւ նման այլ նախագծերն ամբողջովին փոխեցին պատկերացումը մարդու գենետիկայի վերաբերյալ: Այժմ, Օբամայի խոսքերով, նա ուզում է նույնը կրկնել մարդու ուղեղի ուսումնասիրության ոլորտում:

Նախագիծը կոչվեց BRAIN (ուղեղի ուսումնասիրությունը նորարարական նեյրոտեխնոլոգիաների զարգացման միջոցով):

«Մենք պետք է մեծ գաղտնիք բացահայտենք, եւ այդ հարցում մեզ կօգնի BRAIN նախագիծը: Այն գիտնականներին հնարավորություն կտա ավելի լավ պատկերացում կազմել գլխուղեղի աշխատանքի մասին եւ հասկանալ, թե ինչպես ենք մենք մտածում, սովորում եւ հիշում»,- հայտարարեց նախագահ Օբաման:

Գաղտնիքը՝ ականջների միջեւ

Աշխատանքը ծրագրի շուրջ կմեկնարկի 2014 թվականին: Ծրագրում ներգրավված կլինեն Առողջապահության ազգային ինստիտուտը, Հեռանկարային հետազոտական պաշտպանողական ծրագրերի գործակալությունն ու Ազգային գիտական հիմնադրամը:

100 միլիոն դոլար ներդրումների նպատակը կլինի նոր տեխնոլոգիաների ստեղծումը, որոնք թույլ կտան ուսումնասիրել մարդու ուղեղի՝ իրար հետ փոխազդող միլիարդավոր բջիջները:

Գիտնականները կուսումնասիրեն նաեւ, թե ինչպես է մարդու ուղեղն օգտագործում, պահպանում եւ վերամշակում տեղեկատվությունը, ինչպես նաեւ, ուղեղի գործողությունը՝ կապված մարդու վարքագծի հետ:

«Մարդն ունակ է սահմանելու մեզանից շատ լուսային տարիների հեռավորության վրա գտնվող գալակտիկաների գոյությունը, մենք կարող ենք ուսումնասիրել ատոմից փոքր մասնիկները, բայց մենք դեռ չենք բացահայտել մեր ականջների միջեւ գտնվող մեկուկես կիլոգրամանոց նյութի գաղտնիքը»,- ասաց Օբաման:

Ծրագիրը նախատեսում է մասնավոր եւ պետական կազմակերպությունների համագործակցությունը:

Դրանց թվում է Ալենի՝ ուղեղի գիտության ինստիտուտը, որը պարտավորվել է BRAIN նախաձեռնության հետ կապված ծրագրերին տարեկան 60 միլիոն դոլար տրամադրել, ինչպես նաեւ կենսաբանական հետազոտությունների «Սալք» ինստիտուտը, որը 28 միլիոն դոլար կհատկացնի այդ ծրագրին:

Գիտնականների աշխատանքը կհամակարգի էթիկայի հանձնաժողովը:

Օբամայի խոսքերով, ներդրումները գիտության ոլորտ անհրաժեշտ են: Դրանք կօգնեն ստեղծել նոր աշխատատեղեր եւ կնպաստեն տնտեսության աճին:

«Մենք չենք կարող մեզ թույլ տալ ձեռքից բաց թողնել այդ հնարավորությունն այն ժամանակ, երբ աշխարհը շարժվում է առաջ»,- ավելացրեց նա:

Եվրոպական նախագիծ

Ծրագրի վերաբերյալ ԱՄՆ-ի հայտարարությանը հետեւեց մարդու ուղեղի ուսումնասիրության եվրոպական նախագիծը:

Մարդու ուղեղի մոդելի ստեղծման եվրոպական նախագծին կմասնակցի 80 հետազոտական ինստիտուտ՝ Եվրոպայից եւ դրա սահմաններից դուրս, իսկ ներդրումները կկազմեն ավելի քան մեկ միլիարդ եվրո:

Այդ ծրագրի շուրջ աշխատանքի արդյունքում, գերզարգացած համակարգիչների միջոցով, կստեղծվի գլխուղեղի մոդել, որը թույլ կտա նյարդաբանական հիվանդությունների բուժման համար նոր դեղեր ստեղծել:

Գտնվել է ՄԻԱՎ-ի դեմ հակամարմինների ձեւավորման համակարգ

ՄԻԱՎ-ը կարող է անվերջ մուտացիաների ենթարկվել

Ամերիկացի գիտնականները հայտնաբերել են մարդու օրգանիզմում ՄԻԱՎ-ի դեմ պայքարելու բնական մեխանիզմ, որը, ինչպես ենթադրում են փորձագետները, կարող է օգտագործվել նոր պատվաստանյութերի ստեղծման համար:

Հայտնի է, որ այդ վիրուսը, մարդու իմունային համակարգի հետ բախվելիս, արագ մուտացիայի է ենթարկվում: Հենց դա է պատճառը, որ այդքան բարդ է մշակել արդյունավետ պատվաստանյութ, որն ունակ կլինի պայքարել այդ սարսափելի հիվանդության անընդհատ փոփոխվող հարուցիչի դեմ:

Սակայն որոշ մարդկանց օրգանիզմներն արտադրում են բարձր արդյունավետությամբ հակամարմիններ, որոնք ունակ են չեզոքցնել ՄԻԱՎ-ի շտամերի լայն հավաքածու:

Հյուսիսայի Կարոլինայի Դյուկի համալսարանի հետազոտողների խումբը վերլուծել է մի մեխանիզմ, որը վերահսկում է նման հակամարմինների ձեւավորումը:

Վիրուսի մուտացիաներ

ՄԻԱՎ-ով վարակվելու դեպքում մարդու օրգանիզմն անմիջապես արտադրում է վարակի դեմ պայքարող հակամարմիններ: Ի պատասխան, վիրուսը ենթարկվում է մուտացիայի եւ չի արձագանքում հակամարմիններին:

Այդ պատերազմը կարող է տեւել մոտ չորս տարի, ինչից հետո որոշ հիվանդների մոտ սկսում է մշակվել հակամարմինների նոր տեսակ, որի դեմ վիրուսի մի շարք շտամեր անզոր են:

«Թեեւ վիրուսն անընդհատ մուտացիայի է ենթարկվում եւ դրա շնորհիվ այն ունի միլիոնավոր տարատեսակներ, միեւնույն է, դրանք բոլորն ունեն խոցելի տեղեր, որոնց դեմ սկսում է գործել հակամարմնի նոր տեսակը»,- ասում է գիտնական Բարտոն Հայնսը:

Սովորաբար այդ ընթացքում վիրուսն արդեն խոցում է կենսական օրգանները: Դա է պատճառը, որ նոր հակամարմինները չեն կարողանում փրկել օրգանիզմը:

Սակայն որոշ հետազոտողներ կարծում են, որ նոր պատվաստանյութերը, որոնք խթանում են լայն գործողության նման հակամարմինների ձեւավորումը, կարող են ՄԻԱՎ-ի դեմ դիմադրողականություն ստեղծել:

Նոր հետազոտությունը հիմնված է աֆրիկացի հիվանդի արյան անալիզի արդյունքների վրա, որի մոտ շատ արագ, մեկ ամսվա ընթացքում, ՄԻԱՎ են ախտորոշել:



Սուպեր-հակամարմին

Գիտնականներին հաջողվել է այդ հիվանդի արյան միջից առանձնացնել հակամարմիններ, որոնք ունակ են չեզոքացնելու ՄԻԱՎ-ի տարատեսակների 55%-ը: Այդ հակամարմիններն ստացել են CH103 անվանումը:

Հակամարմինների պայքարը վիրուսի դեմ մի քանի տարի է տեւում:

Այդ հակամարմնի ձեւավորումը իմունային համակարգի եւ վիրուսի միջեւ երկարատեւ պատերազմի հետեւանքն է: Գիտնականներին հաջողվել է հասկանալ պատերազմի յուրաքանչյուր փուլը, որի արդյունքում առաջանում է հակամարմինը:

«Մենք կարողացել ենք կազմել վիրուսի եւ իմունային համակարգի միջեւ պայքարի մանրամասն սխեմա»,- ասում է գիտնական Հեյնսը. «Դա մեզ կօգնի արդյունավետ պատվաստանյութ ստեղծել»:

Նրա խոսքերով, նոր պատվաստանյութը կունենա բաղադրիչներ, որոնք ուղղված կլինեն վիրուսների տարբեր խոցելի տեղերի դեմ: ՄԻԱՎ-ի դեմ պայքարող՝ գոյություն ունեցող դեղերը տարբեր դեղամիջոցների համադրություն են:

Բժշկական հետազոտությունների խորհրդում ՄԻԱՎ-ի դեմ պատվաստանյութերի կլինիկական փորձարկումներով զբաղվող բժիշկ Սառա Ջոզեֆն այդ հետազոտությունը հետաքրքիր է համարում:

«Որոշ հիվանդներ իսկապես արտադրում են հակամարմիններ, որոնք մեծ քանակությամբ վիրուսներ են չեզոքացնում, սակայն դրանից քիչ օգուտ կա, քանի որ դա տեղի է ունենում հիվանդության եզրափակիչ փուլերում»,- ասում է նա:

Բժիշկ Ջոզեֆի կարծիքով, նման հակամարմինների ձեւավորման մեխանիզմների ճանաչումը կարող է ՄԻԱՎ-ի դեմ պայքարում մեծ առաջընթաց լինել, իսկ գիտնականներն արդեն խոսում են նման հակամարմինների զանգվածային արտադրության եւ դրանց միջոցով մեծ քանակությամբ հիվանդների բուժման մասին:

Հետաքրքիր փաստեր

- Մարդու մարմնի քաշի 10 %-ը բաղկացած է բակտերիաներից:
- Մարդիկ միակ արարածներն են, որոնք իրենց ձեռքերի ափերին ներկանյութ չունեն:
- Մարդու մարմինը կարող է գործել առանց ուղեղի:
- Երեխաները սկսում են երազներ տեսնել նույնիսկ մինչեւ ծնվելը:
- Աորտան՝ մարմնի ամենամեծ զարկերակը, գրեթե պարտեզի խողովակի չափ է:
- Անհնար է փռշտալ բաց աչքերով:
- Ամեն օր ստեղծվում են 100 միլիարդ արյան կարմիր գնդիկներ:
- Նյարդային ազդակները հաղորդվում են մոտ 400 կմ/ժ արագությամբ:
- Ժպտալիս մենք շարժում ենք ամենաքիչը 30 մկան:
- Մեր մարմնի 70 տոկոսը բաղկացած է ջրից:
- Մարդու օրգանիզմն օրվա ընթացքում արտադրում է 1 լիտր թուք:
- Արյան կարմիր գնդիկը կարող է շրջանառվել մարմնով մեկ՝ 20 վայրկյանի ընթացքում:
- Փռշտոցից առաջանում է 166 կմ/ժ արագությամբ օդային հոսանք, իսկ հազից՝ 100 կմ/ժ:
- Մեր սիրտը օրական բաբախում է գրեթե 100 000 անգամ:
- Մեր արյունը 96 558 կմ երկարությամբ ուղի է անցնում:
- Մեր թոքերն ամեն օր շնչում են գրեթե 2 միլիոն լիտր օդ:
- Երբ մենք որեւէ բանի ենք դիպչում, մեր ուղեղին 124 մղոն/ժ արագությամբ հաղորդագրություն ենք ուղարկում:
- Համարվում է, որ մարդը կյանքի ընթացքում շնչում է գրեթե 29 030 կգ փոշի:
- Մեկ մարդու մաշկի վրա ապրող օրգանիզմներն ավելի շատ են, քան երկրի վրա ապրող մարդկանց թիվը:
- 30 տարեկանից հետո մարդիկ քիչ-քիչ սկսում են փոքրանալ:
- Մեր մարմնում բավականաչափ երկաթ կա՝ մի այնպիսի մեխ պատրաստելու համար, որը կկարողանա մեր մարմնի կշիռը պահել:
- Թոքերի մակերեսը հավասար է թենիսի կորտերի մակերեսին:
- Շատերը 60 տարեկան հասակում կորցնում են իրենց համային ընկալիչների 50%-ը:
- Մարդու մարմնում եղած ածխաջուրը բավական է 9000 արճիճի մատիտ լցնելու համար:
- Մարդու մաշկի 3 սմ քառակուսին պարունակում է 625 քրտնագեղձ:

Էջը պատրաստեց՝ Էդգար Հարությունյանը

արտակարգ ժամանց

Զարմանալի աշխարհ

Կրետների առեղծվածը

Իսպանիայում կրետի հսկայական բույն է հայտնաբերվել:

Երեւի թե դա համաշխարհային ռեկորդ է: Յոթ մետր տրամագծով կրետի բույնը գտնվում էր Սան Սեբաստիան դելա Գոմերա քաղաքի լքված տներից մեկում եւ գրեթե ամբողջովին զբաղեցնում էր մեկ սենյակ: Հսկա բույնը հայտնաբերել են ոստիկանները. նրանք կրետների «կացարան» էին եկել՝ արծագանքելով սարսափի մատնված հարեւանների անվերջ բողոքներին եւ կանչերին, որոնք ժամ առաջ ցանկանում էին ազատվել անկոչ հյուրերից:

Այնուհետեւ անոմալ բույնը հետազոտեցին փորձագետները: Նրանք ասացին, որ սովորաբար կրետները նման հսկայական «բնակավայրեր» չեն կառուցում:

Ամենայն հավանականությամբ, ըստ փորձագետների, դա ինչ-որ գաղթած տեսակ է, որն Աֆրիկայից եկել է Եվրոպա: Կանարյան կղզիները Մարոկոյից ընդամենը 100 կիլոմետր հեռավորության վրա են գտնվում: Հավանաբար՝ հենց դա էր իսպանացիներին «ահաբեկած» միջատների գաղթի ճանապարհը:

Աֆրիկացի կրետները, կարծես, շատ էին հավանել այն վայրը, որտեղ իրենց ոչ ոք չէր անհանգստացնում եւ որտեղ անձրեւներ չէին տեղում: Այնպես որ, նրանք որոշել էին ամբողջ «գերդաստանով զավթել» իսպանական լքված տունը:

Չսպացված «ականապատում»

Ամերիկյան Փենսիլվանիա նահանգի Պիտսբուրգ քաղաքի համալսարանի դասախոսը, չցանկանալով այդ օրը դասավանդել, հայտնել էր ոստիկանությանը, որ ուսումնական հաստատությունում ռումբ է տեղադրված:

34-ամյա Նենսի Բրունին խոստովանեց, որ տառապում է հոգեկան անհանգստությամբ, դեպրեսիայով եւ նեւրոզով, սակայն դեղեր գնելու գումար չունի: Հենց նման դեպրեսիաներից մեկի ժամանակ նա, երկար չմտածելով, զանգահարեց ոստիկանությանը եւ հայտնեց համալսարանում տեղադրված ռումբի մասին: Կինը հույս ուներ, որ ուսանողներին կտարհանեն ու դասերը կհետաձգվեն: Այնուամենայնիվ, դա տեղի չունեցավ: Սակայն «հնարամիտ» Բրունին համալսարանի միջացքում գրություն թողեց, որի վրա գրված էր, որ համալսարանում ռումբ կա եւ այն շուտով պայթելու է: Գրությունը հայտնաբերեցին երկու ուսանողներ եւ անմիջապես դիմեցին ոստիկանությանը, սակայն տարհանում այս անգամ էլ չեղավ: Տեսնելով, որ իր

«հանճարեղ» մտահաղացումը, մեղմ ասած, արդյունք չի տալիս՝ հուսահատ Բրունին ինքնուրույն հետաձգեց դասերը՝ պատճառաբանելով, որ ինքը հավատում է ռումբի գոյությանը եւ չի ցանկանում վտանգի ենթարկել սեփական կյանքը: Հենց դրանով էլ անհաջողակ դասախոսը մատնեց ինքն իրեն եւ ծերբակալվեց:

Օղու «փրկիչ ուժը»

Սանկտ-Պետերբուրգում տղամարդն ընկել էր տեղի մետրոյի ռելսերի վրա եւ երջանիկ պատահականությամբ ողջ էր մնացել՝ չնայած կանգ չառնող գնացքների ընթացքին:

Այդ օրը դեպի «Վոլսկովայա» կայարան շարժվող գնացքների ընթացքը կանգնեցվել էր՝ արկածախնդիր տղամարդուն վտանգավոր ճանապարհից հանելու համար: Նա մի քանի րոպե պառկած էր մնացել ռելսերի արանքում: Այդ ընթացքում նրա վրայով հասցրեց անցնել երկու գնացք եւ միայն երրորդ գնացքի մեքենավարը նկատեց տղամարդուն եւ կանգնեցրեց գնացքը: Տղամար-

դուն հաջողվեց փրկվել, քանի որ նա ամբողջ մարմնով հայտնվել էր ռելսերի արանքում: Դա է պատճառը, որ երկու հսկա տրանսպորտային միջոցները չվնասեցին «անմահ» տղամարդուն:

Ինչպե՞ս էր նրան հաջողվել անշարժ մնալ, երբ նրա վրայով մեծ արագությամբ եւ աղմուկով անցնում էին երկար գնացքները, մնում է հարցական: Ամենայն հավանականությամբ նա խոր քնի մեջ եւ անսթափ վիճակում էր գտնվում:

Անքուն գիշերներ...

Թենեսի նահանգի Մեմֆիս քաղաքում «911» արագ արձագանքման ծառայության հեռախոսավարը քնել էր տեղի բնակիչներից մեկի ահազանգին պատասխանելու ընթացքում:

Հեռուստաընկերության հաղորդմամբ, որի ենթակայության տակ է գտնվում «չարաբաստիկ» հեռախոսազանգի ձայնագրությունը, ոմն Լիզա դիմել է փրկարար ծառայությանը, որպեսզի հայտնի իր տուն օտար մարդու ներխուժման մասին, սակայն պատասխանի փոխարեն լսել է հեռախոսավարի խռմփոցը: Դրանից հետո ապշած Լիզան անջատել է հեռախոսն ու զանգահարել «911»-ի այլ ստորաբաժանում:

Քիչ անց աղջկան, այնուամենայնիվ, տրամադրեցին օգնություն, սակայն դրանից որոշ ժամանակ անց Լիզան, հիասթափված, որոշեց հեռանալ Մեմֆիսից եւ այլ քաղաքում բնակություն

հաստատել: Հեռուստաընկերության լրագրողները փորձեցին հարցազրույց վերցնել քնկոտ հեռախոսավարից, սակայն թե՛ նա, թե՛ նրա անմիջական ղեկավարը, իբր հիվանդության պատճառով, անորոշ ժամանակով արձակուրդում էին:

Նախորդ համարի խաչբառի պատասխանները

	ՈՒ		Տ		Հ		Պ	Ս	Ի	Ք	Ե
Ա	Ղ	Վ	Ա	Մ	Ա	Զ		Տ		Ս	
	Տ	Զ	Ր	ՈՒ	Կ		Դ	Ա	Ս	Ե	Ն
Մ	Ա	Կ	Ա	Ր		Մ	Ա	Հ	Ա	Ն	Ա
	Փ	Ա	Փ	Ա	Գ		Տ	Ո	Ր	Ո	Ն
Ց	ՈՒ	Պ		Դ	Ի	Վ	Ի	Դ	Ե	Ն	Դ
	Շ		Հ		Ս	Ե	Ր		Կ		ՈՒ
Դ		Հ	Ո	Վ	Ա	Զ		Դ		Դ	
Ա	Գ	Ա	Պ		Վ	ՈՒ	Չ	Ե	Տ	Ի	Չ
Ց		Կ	Ո	Ղ	Ո	Վ		Կ	ՈՒ	Լ	Ա
Ա	Ռ	Ա	Պ	Ա	Ր		Պ	Ա	Լ	Ա	Ր
Կ		Ս		Ր		Դ		Ն	Ա	Ն	Ա
	Կ	Ա	Ն	Ա	Դ	Ա					Գ
Հ	Ա	Կ	Ո	Բ	Ո	Ս					Ո
	Մ	Ա	Ն	Ա	Ն	Ա					Ր
Չ	Ա	Ն	Ա	Ղ		Կ	Ա	Թ	Վ	Ա	Ճ



§²ñï³Ï³ñ·Ã»ñÃ¦
ß³µ³Ã³Ã»ñÃÇ
ÑÇÙÝ³¹Çñ »ñ Ññ³ï³ñ³ÏÇã
§²ñï³Ï³ñ· ³ÉÇù¦ êäÀ

îÝûñ»Ý »ñ ·ÉËë³íáñ ËÙµ³·Çñ՝
ÜáõÝ» ¶ñÇ·áõÙ³Ý

ÊÙµ³·ñÇ ï»Õ³Ï³É՝
²í³. º÷ñ»ÙÙ³Ý
Ò»ñ³íáñáÕ՝
Ð³ëÙÇÏ ²µ»ÉÙ³Ý

ºñ»ñ³Ý, ²×³éÙ³Ý 1
Ð»é. 24 24 22
E - mail: tert@emergency.am
info@mes.am

îå³·ñí³Í¿ §îÇ·ñ³Ý Ø»Í¦ Ññ³ï³ñ³ÏáõÃÙ³Ý
ïå³ñ³ÝáõÙ՝ ²ñß³ÏáõÝÙ³ó 2
Ì³í³ÉÁ՝ 2 ïå³·ñ³Ï³Ý Ù³ÙáõË
ä³ïí»ñ՝ 435, ·ñ³ÝóÙ³Ý íÏ³ÙÙ³Ï³Ý՝ 1074,
ïå³Ù³Ý³ÏÁ՝ 5262 ûñÇÝ³Ï:
Ստորագրված է տպագրության
18.04.2013 թ.